

ԵՐԿՐԻ ՄՇԱԿՆԵՐ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆԻ

0', դառն հոգսերի խղճնեկ զաւակներ,
Որքան համբերող, քաջ է ձեր հոգին,
Տանջւում էք անվերջ—օրեր, տարիներ.
Կարծես տանջանքն է միայն ձեր բաժին...

Մանուկ օրերից ձեր մէջ ապրելով,
Վկայ եմ եղել ձեր շատ ցաւերին.
Տեսել եմ, ինչպէս տանջանքի գնով
Դուք հաց էք տալիս հայրենի երկրին:

Տեսել եմ, ինչպէս յուսալից, զւարթ,
Դուք մշակում էք անմշակ զաշտեր.
Ինչպէս տանջանքում անլաց, անվհատ
Դուք երդ էք երդում—վաստակի երգեր:

Տեսել եմ, ինչպէս ամառւայ շոգին,
Երբ արևն, ասես, կըրակ է թափում,
Քրտնակելս եղած, մանգաղը ձեռքին,
Դուք բան էք անում ոսկէշող արտում:

Տեսել եմ, ինչպէս դունաթափ աշնան
Հայրենի երկրի կուրծքը պատռելով,

Այնտեղ թողում էք, գանձերի նման,
Ոսկի հատիկներ ոսկի յոյսերով:

Տեսել եմ, գարնան սիրուն օրերին
Պայծառ արևը դեռ նոր ծագելիս,
Կանաչ, ալէծուփ արտերի մօտին
Զեղ ծունկ խոնարհած ջերմ աղօթելիս...

Տեսել եմ, ինչպէս և' ցուրո, տաղտկալի
Հմրան գիշերներ նստած խրճիթում,
Ցոգնած ձեռքերիդ դադար չէք տալի—
Խոզին էք նորոգում, մանգաղը սըրում...

Եւ այդպէս ազնիւ գործին անձնւէք՝
Ապրում, տանջւում էք անբաւ հոգսերում.
Եւ ձեր տանջանքում, հերձս-մշակներ,
Արդար վաստակն է ձեղ ոգևորում...

0', հայրենիքիս քրտնաջան որդիք,
Որքան համբերող, քաջ է ձեր հոգին.
Զեզնով է միայն կանգնուն հայրենիք—
Համբոյր ու օրհնանք ձեր սուրբ վաստակին:

8 սեպտեմբերի 1892 թ.

Մոսկա: